10-րդ շաբաթ

Թեմա՝ «Ճանապարհորդություն»

Ա. Ստորև տրված հարցերի օգնությամբ կառուցել 5-10 որպե տևողությամբ բանավոր տեքստ և ներկայացնել այն լսարանին:

Հարցեր՝

1. Ճանապարհորդության ի՞նչ տեսակներ գիտեք:
2. Ճանապարհորդության ո՞ր տեսակն եք նախընտրում: Ինչու՞:
3. Ճանապարհորդության ո՞ր տեսակը չեք գերադասում: Ինչու՞:
4. Ճանապարհորդության ո՞ր տեսակներն են տարածված քո երկրում:

5. Հաճա՞խ ես ճանապարհորդում:
6. Վերջին անգամ ե՞րբ ես ճանապարհորդել:
7. Ու՞ր և ինչո՞վ ես գնացել:
8. Որտե՞ղ ես մնացել:
9. Ի՞նչ ես արել այնտեղ:
10. Ու՞ր կուզես գնալ, որ դեռ չես գնացել:

***

Տեքստ կազմելիս ըստ ցանկության օգտվել առաջարկվող բառերից, բառակապակցություններից և այլ արտահայտություններից:

Կիրառելի բառեր և արտահայտություններ՝

ցամաքային	նավ
ծովային	մեքենա
օդային	ուղղաթիռ
երկաթուղային	բնություն
ստորջրյա	մշակույթ
ավտոբուս	արշավ
գնացք	զբոսաշրջություն
ինքնաթիռ	արտասահման

***

Բ. Յուրաքանչյուր ուսանողի ներկայացրած տեքստի հիման վրա, այլ տեղեկություններ ստանալու կամ տրված տեղեկությունը ճշգրտելու նպատակով տալ և ստանալ լրացուցիչ հարցեր՝ երկխոսելով մյուս ուսանողների հետ:

Բնագրի նմուշ 1՝

Հայաստանը հեքիաթային երկիր է, որ ունակ է ցանկացածին հիացնել իր հնագույն մշակույթով և հյուրընկալությամբ: Ճանապարհորդությունը Հայաստանում 2020 թ-ին բացառիկ հնարավորություն է ծանոթանալու հնադարյան սրբավայրերին, քաղաքներին ու հուշարձաններին և համադրելու այդ ծանոթությունը վեհաշուք լեռներում և հրաշալի բնության գրկում հանգիստն անցկացնելու հետ:

Հայաստանը շատ ապահով երկիր է, որտեղ հանցավորության մակարդակը շատ ցածր է: Պլանավորելով ճանապարհորդությունը

Հայաստանում՝ հյուրերը կարող են վստահ լինել իրենց հանգստի անվտանգությանը: Ուղևորության ընթացքում նրանք կկարողանան հանգիստ զբոսնել քաղաքում, լինել տարբեր հասարակական վայրերում, օգտվել հասարարակական տրանսպորտից: Հայաստանում դիտվում է փողոցային հանցագործության բավականին ցածր մակարդակ: Զբոսաշրջիկները հատկապես գնահատում են այն փաստը, որ կարող են հանգիստ զբոսնել երեկոյան Երևանում անգամ ուշ ժամին: Բացի այդ Հայաստանը ամենաապահով երկրներից մեկն է էթնիկ, ռասսայական և կրոնական տեսակետից:

Դա պայմանավորված է նրանով, որ Հայաստանի բնակչության 96% քրիստոնյա հայեր են: Այս փաստն ապահովում է զբոսաշրջության անվտանգությունը: Դեպի Հայաստան ճանապարհորդության հաջորդ առավելությունը բարձրորակ բուժծառայությունն է, որից կարելի է օգտվել բավականին մատչելի գներով: Օրվա ցանկացած պահի կարելի է թեժ գծով կապվել շտապօգնության աշխատակիցների հետ: Հայաստանի փողոցներում շատ հազվադեպ կարելի է վեճի կամ ծեծկռտուքի ականատես լինել: Հասարակական կարգը պահպանում է ոստիկանությունը: Այս փաստն ապահովում է աջակցությունը ձեր՝ Հայաստանում ճանապարհրդության ընթացքում
ծագած տարատեսակ հարցերի դեպքում:

Ճանապարհորդությունը Հայաստան կարելի է իրականացնել ցանկացած տրանսպորտային միջոցով. գնացք, ինքնաթիռ, տուրիստական և անձնական ավտոմեքենաներ: Միևնույն պահին անհրաժեշտ է հիշել, որ Հայաստանի և Թուրքիայի ու Հայաստանի և Ադրբեջանի սահմանները փակ են: Այդ երկրներ Հայաստանից մուտքը հնարավոր է միայն Իրանից կամ Վրաստանից: Կարևոր է պահպանել Հայաստան մուտք գործելու կանոնները, երբ Ռուսաստանից, Ուկրանինայից կամ այլ երկրներից անձնական կամ տուրիստական ավտոմեքենայով եք ճանապարհորդում.

Անհրաժեշտ է ունենալ միջազգային վարորդական իրավունք,

Անձնական ավտոմեքանայով ճանապարհորդելու դեպքում անհրաժեշտ է ավտոտեխգրքույկի առկայությունը:

Աղբյուր՝ https://onewaytour.com/hy/chanaparhordutyun-hayastanum-2017in/